«Ինչպես կը փրփրար ծերունին մուլքադար խոջա Հիբանը, եթե գերեզմանից դուրս և իրենց բլրակին չհասած՝ տեսներ մի տուն, կապույտ ներկած երկու մեծ դռներով, դռան ճակատին ցուցանակը, վրան գլուխ շաքար, մի քանի կապ թեյ նկարած և ռուսերեն գրած՝

Мелочная лавка бр. Мангасаровых...

«Խանութի մի անկյունում աղաքարի կույտեր, մեծ տակառներ՝ մեջը լի ցորեն, գարի, ապա բարակ միջնորմը՝ վրան շատ ծանոթ գորգեր, գորգերի վրա պղնձե փայլուն կշեռքը, իսկ դարակներում ճոթ ու կտոր, գույնզգույն չթի թոփեր, մահուդ, ատլաս, ծոպավոր թաշկինակներ, կոճ ու թել...

«Եվ այդ խանութում Եփրեմը՝ խոջա Հիբանի կրտսեր որդին, բուխարու փափախով, սև մահուդե պինջակով, չթի թոփերը առաջը թափած՝ հաճախորդին գովում էր, ֆիրմայի անունը տալիս... Գովում էր և չափում, արշինը հոտավետ չթի մեջ այնպես թռռացնում, ասես մանկուց նրա հետ էր խաղացել...

«Իսկ անկյունում, դալխի մոտ, նստում էր Մկրտումը, ավագ եղբայրը, որը հին ճանաչ Սուլեյման քերվայի որդուն երկու հարյուր ռուբլու մուրհակը ծոցի հաստ «կնիշկայի» մեջ պահելուց հետո այն նույն տեղից հանում էր ու մեկ-մեկ հաշվում 15 հատ տասնոց, նույն կարմիր տասնոցներից, ինչպիսիք կային հոր ժամանակ...

«Այդ շաքարն ու չիթը գնված էին այն դրամով, որ մնացել էր խոջա Հիբանից հետո»։

Կապիտալի գործադրության այս երկրորդ փուլին անցնելու պրոցեսի հետ է համընկնում Գորիս քաղաքի հիմնադրումը։ Գավառական մի խոշոր կենտրոնական վայրում գյուղերից ի մի հավաքվելու պահանջը ամենից վաղ զգում էր միջնորդական կապիտալը՝ ձգտելով իր գործունեության համար գյուղականից ավելի երկար շառավիղներ ձեռք բերելու։ Գորիս քաղաքը վերածվեց թե՛ տեղական հումքի գլխավոր հավաքավայրի և թե՛ գավառի գյուղերի համար գործարանային ապրանքների բաշխիչ պահեստի։ Գորիսի միջնորդ-առևտրականները հետզհետե այնքան ամրացան, որ Շուշու պահեստներից անկախ՝ անմիջական կապեր սկսեցին հաստատել Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների հետ։ Դարավերջին շատ որոշակի դրսևորված իրողություն էր գյուղացիական տնտեսությամբ զբաղվող զանգվածից մի խումբ տնտեսությունների առանձնանալը, որոնց եկամուտի գլխավոր աղբյուրը ոչ թե երկրագործությունն ու անասնապահությունն էին, այլ դրամի շահեցումը և ուրիշի ուժի օգտագործումը։ Գորիսում առաջ եկան այնպիսի դրամատեր ընտանիքներ, որոնք իրենց շրջանառությունների համար պետք ունեին արդեն ընդարձակ զետեղարանների։ Այսպես Մելիք-Նուբարյանները մի քանի այլ առևտրականների հետ միացած կառուցեցին մի երկար, բազմաթիվ խանութներ բովանդակող պասաժ։ 1913 թվին այդպիսի առևտրական ձեռնարկությունների թիվը Գորիսում հասնում էր 134-ի։ Այստեղ էին տեղացիների՝ Պարոնյանների, Յոլունքի, Մղդուսունքի, Ադու Մելքումին Հաբրի (Հարությունի), Վանեիվների կողքին խանութներ հիմնել ղանաղան գյուղերից իրենց կապիտալներով տեղափոխված առևտրականները. կապանցի Մելիք-Նուբարյանները, բռնակոթցի՝ Սիմեոն Բեյ Մելիք-Թանգյանը, քարահունջեցի Մատուրյանների փեսան, տոլորսեցի Գալուստ Տեր-Մինասյանը, շենաթաղեցի Ս. Պողոսյանը և ուրիշներ։